Քաղաքացիական գործ թիվ՝ **ԵԴ2/28003/02/23**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ՝ դատավոր Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
2023 թվականի սեպտեմբերի 11-ին

Ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1. Ընկերության ներկայացուցիչը 2023 թվականի օգոստոսի 29-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ ՊՆ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-23-9/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը հայտարարել չկայացած հրավերի բոլոր՝ թվով 67 չափաբաժինների մասերով:

Հայցադիմումը դատավոր Ա. Մուշեղյանին է մակագրվել 2023 թվականի օգոստոսի 29-ին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի սեպտեմբերի 6-ին:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ընդդատյա է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներին և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 125-րդ, 188-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-23-9/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը հրավերի բոլոր՝ թվով 67 չափաբաժինների մասերով չկայացած հայտարարելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

1.2. Գործը քննել գրավոր ընթացակարգով:

2. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի հոկտեմբերի 24-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**